ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» 10 2012թ. Թիվ 45

## ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ ՆՈՐ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ, 30-րդ հոդվածի 5-րդ մասերի, ,,Ներքին աուդիտի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. օգոստոսի 11-ի թիվ 1233-Ն որոշման պահանջներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012թ. փետրվարի 23-ի թիվ 165-Ն հրամանը և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2012թ. հոկտեմբերի 8-ի թիվ 2/8/1-1/4770-12 գրությունը.

Քաղաքային համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Արտաշատի քաղաքապետարանի աշխատակազմում ստեղծել երկու հաստիքային միավորից կազմված կառուցվածքային նոր ստորաբաժանում՝ „Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժին„ անվանմամբ:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին՝ Արտաշատի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում հետևյալ լրացումները կատարելու նպատակով.

ա/ անվանացանկի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի առաջին ենթախումբը լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր 8-րդ կետով.

*2.1. Համայնքային ծառայության առաջատար պաշտոնների 1-ին ենթախումբ*

8. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ

բ/ անվանացանկի համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի երրորդ ենթախումբը լրացնել հետևյալ խմբագրությամբ նոր 11-րդ կետով.

*2.3. Համայնքային ծառայության առաջատար պաշտոնների 3-րդ ենթախումբ*

11. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ-աուդիտոր:

Որոշումն ընդունվեց միաձայն՝

Նազարյան Հերիքնազ

Հովհաննիսյան Վազգեն

Մնացականյան Հարություն

Ենոքյան Ռաֆիկ

Մուրադյան Վահրամ

Դերմոյան Արման

Բենիամինյան Կարեն

Վարդանյան Ռազմիկ

Հովհաննիսյան Ներսիկ

ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Գ.ՄՈՒՐԱԴՅԱՆ